

Ճ'ՕՒ. Կեհազ — խանում, Հայուհի¹⁾:
Ճ'ՕՒ. Շիրին խանում, Խսպահանց
ի ծնողներէ:

Ճ'ՕՎ. Գյեօհէր — խանում, Գյեօ-
հանցի ծնողներէ:

Ճ'ՕՒ. Օհէյնար — բաջի խանում,
Վազանդարանցի ծնողներէ:

Ճ'ՕՒ. Կարգիզ — բաջի խանում,
Հայուհի²⁾

(1) Նախիչևանցին, Երևելի էր իւր մարդավա-
րութեամբն ու ճարտար լեզուովն պարսկերէն բար-
քառումն:

(2) Օսմանեան կողմերէն բերած զերին, Երևելի
էր իւր տաճկերէն խօսակցութեան մէջն: Ըստ

Ճ'ՕՎ. Խոպիջէ խանում, Խորայե-
լուհի:

Ճ'ՕՒ. Թարախաթուն, Խսպահանցի
ծնողներէ:

Ճ'ՕՒ. Ապքինէ խանում, Թռուբք-
մանուհի:

ԳԱՂԱՍ ՇԻՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

անգամ Ծահը կը հրամայէր սրան առածներ,
պատմութիւներ, առասպելներ պատմել մինչև իւր
քունը տանելը: Բաց ի էս ձիբքերէն, Էր և գեղե-
ցիկ տեղեամբ: Նրա ծամելն այնքան երկար էին, որ
թզաչափ գետնի վերայ կը սփռուէր՝ Երբ կը շրջէր:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հ Ե Յ Ե

Լուսին, որ Հայոց դաշտեր շրջում ես՝
 Երանի՝ թէ մեզ տեսածդ գաս պատմես,
 Թէ ինչ վեճակում է Հայ ազգութիւն,
 Թէ ունի՞ նախկին ուժն և զօրութիւն:
 Ալսիր պատմել աննախանձարար
 Ինչ որ գործվում է արդար անարդար.
 Պատմի՛ր ով լուսին՝ պէտք չէ շաապել,
 Մեր Հայրենեաց լուր կամինք մենք լսել:
 Իսկ արծաթափայլ լուսին լի լուսով՝
 Տրտմութեան վերայ այլ կնճիռ թողլով
 Ակսաւ պատմել մի ըստ միոջէ
 Ինչ անցք անցել են և դեռ անցնումն:
 — Թէպէտ և իւրեան դաշտեր ամայի
 Հայն գործումն առանց մի աշխի,

Այլերի միջեց արդէն գուրս զալով
 և նձում, իւր արան խրձում խնդալով :
 Թափէտ և նենդ Յոյնն . . . նենդում է և ային՝
 Ազգութիւն նորա քանդել զլեռովին,
 Ուրախանում է մըաքով յար խարուած
 Երբ որ տեսնում է սիրով յինքն յարած:
 Թափէտ կաթոլիկ և բողոքական
 Վարողիչները ինչպէս չար դադան՝
 Գրիգորի և օտից խելով գտաներ
 և ապատճառում ին շատ ու շատ վշաեր,
 Ռայց և խայտառակ նոցա գործքերը
 Եւ պառակտըման բոլոր ջանքերը՝
 Այժմ խիստ թոյլ են՝ չունին զօրութիւն,
 Ըուտով կվերնան, քանդի չունին բոյն:
 Երբ որ գիտութիւն նսաեց զատասաան,
 Ազգաց իրաւունք երեան եկան,
 և այսոց ազգութեան ձեռքին մի մատեան
 Գնաց դատասատան անմահ գիտութեան:
 Այս այն մատեան էր ուր որ հնութիւն
 և այսոց ազգութեան զրուած էր համբուն,
 Խորենեան վարժ ձեռք զրիչք պատմութեանց
 Աւանդ և այս ազգից թողին աշխարհաց:
 Քննեցաւ այս զիրք, ուր որ վիշտ ցաւեր
 և այսոց ազգութեան թողին պատմիչներ,
 Ուր որ Եղեշէ քաղցրաբան գրչով
 Ողբում էր Վարդան իւրեան քաջերով,
 Եւ Բնդհանըական Պատմութեան թերթեր
 Ջոյց տուին նոյնպէս բիւր տառապանքներ,
 Խայտառակուեցան Ինկինիցիանել *)
 Եւ եղեռական Աֆադաֆէներ **):
 Գիտութիւն յաղթեց երբ որ յաջողեց
 Անօրէն մարդոց չափ սահման դրեց,

(*) Հոռվմէագաւան հոգեորականների կրօնական քննութիւններն կամ կաթոլիկաց հաւատաքննութեան ատեանք:

(**) Այն բոլոր միջոցները որ գործ էին դնում Պապական հոգեորականները կառկածելի մարդոց դեպի ի ուղղութիւն կամ մահու խարոյի գարձնել՝ կոչվում է -Քր- -Ք- -Ք-:

Չըմրիսկ ձեռքը եղբօր արեան մէջ ,
 Վաղցրութեամբ լուծել ամեն կազ ու վէճ :
 Ա ձուեց համակամ գիտութեան ատեան
 Յարգել և սիրել մարդուն բանական ,
 Եւ աղատութեան կամքի և խղճի
 Ոչ ոք յանդգնի դնել չափ սաշման :
 Հիացաւ երկիր դէպ ի այս վըճիռ ,
 Գիտութիւն , գուեց , դու մեզ կեանք բերիր ,
 Ըրդ թագաւորէ դու մեր սրտերին ,
 Դու կեանք և փրկիչ մարդկութեան սեռին :
 Երբ թագաւորեց գիտութիւն հղօր՝
 Սմեն ազգ ջանաց յառաջել նոյն օր ,
 Իսնաբարութիւնն ձգնաժամ հասաւ ,
 Վանդի իրաւունք երեան եկաւ :
 Հայ ազգութիւն ևս գիտութեան շնորհով՝
 Գիտուն աշխարհաց անխոնջ ջանքերով՝
 Շնչում է արդ օդ աղատ և ուրախ ,
 Զկան շատ տեղում ոչ ախ և ոչ վախ :
 Իսայց ուր Հայորդին երբեմն տարադիր
 Տանում է զրկանք և վիշտ սաստկադին ,
 Զէ թագաւորել այնտեղ գիտութիւն
 Չունի անդ արժէք մարդն ու ազգութիւն :—

 Հապա Հայ ազգ՝ դու որ կամիս գիտել
 Վո ազգի վիճակ , կուղես կարեկցել ,
 Գիտութեան զրօշի տակը դու մայր ,
 Եյնտեղ անվիշտ կեանք քեզ համար զամբը :
 Խոկ եթէ հեռու դու գիտութիւնից
 Կուղես յետ մնալ և մարդկութիւնից ,
 Եերկայ վիճակիցդ ինչ օգուտ է քեզ ,
 Ե՞ր այդպէս հարցով աշխատ կառնես մեզ :